տան ու վերադարձած։ Այդ ճանապարհորդութեան միջոցին, 1637 թուի առաջին դեսպանութիւնը հասնում է Շամախի քաղաքը, որ այն ժամանակը տեղացի մահմեդական բռնաւոր Խաների ձեռքին էր և նոցա մայրաքաղաքն էր համարվում։ Յունվարի 5-ն (1637 թ.) գրում է Օլեարիւսը. «Խանը ուղարկել էր իմացնելու դեսպաններին, որ միւս օրը Հայերը պիտի օրհնեն իրանց տօնը», «Խաչէ—Շուրան» — «Խաչ ի ջուրն», այսինքն խաչը ջուրը քցելը, քաղաքից դուրս, Պուլի-ամբէրի (Buli Ambari) անուանեալ կամուրջի մօտ։ Ինքը Խանը կամենում էր ներկայ գտնուիլ հանդէսին և այդ պատճառաւ, եթէ դեսպաններն էլ կը կամենային տեսնել տօնախմբութիւնը, այն ժամանակ խանը կը հրամայէ նոցա համար ևս տեղ պատրաստել։ Հայքը, Ռուսաց նման, յունվարի 6-ին կատարում են Մկրտութեան տօնը ջուրը օրհնելոյ և այս տօնը սկսում են կանուխ առաւօտից, դեռ մինչև լոյս բացուիլը, պատարագ մատուցանելով և քարոզ կարդալով։ Որովհետև դեսպանների բնակարանը մօտ էր հայոց եկեղեցւոյն կամ մատուռը, այդ պատճառաւ նոքա մեղանից մի քանիսին հետը առնելով, գնացին եկեղեցին՝ նայելու Հայոց աստուածպաշտութեան և ծիսակատարութեանց վերայ, որ նման են հռոմէականներին։ Եկեղեցում եպիսկոպոսը, որ արդէն ծեր էր և տօնիս պատճառաւ եկած էր մի ուրիշ տեղից, երկար ճառելուց յետոյ թէ ինչպէս Քրիստոսը յայտնուեցաւ հեթանոսաց՝ մօտեցաւ դեսպաններին և թարգմանի միջոցաւ ոխրով խօսում էր նոցա հետ, և սրտանց ուրախանում, որ այդպիսի նշանաւոր անձինք, որ նմանապէս Քրիստոնեայ են և հեռաւոր աշխարհից եկած, արժանացրին իրանց ներկայութեանը նոցա Աստուածպաշտութիւնը, ի միսիթարութիւն իւր և իւր հօտի, որի նման օրինակը առաջ չէին տեսած։ Ի միջի այլոց, նմանապէս ասաց, որ թէ և պարոնայք դեսպանները տակաւին չեն ճանաչում իրան և չգիտեն թէ նա ով է, բայց իւր ով լինելը նա կը յայտնէ սոցա մի ուրիշ աւելի յարմար ժամանակ։ Այնու ամենայնիւ, մենք հասկացանք, որ այս եպիսկոպոսն էլ նման Աչտարխանում մեզ պատահած վարդապետին, ուղարկուած է այս կողմերը Հռոմայ պապից [1]) մի այլ պատրուակաւ, լոկ արևելեան եկեղեցի-

[1]) Սխալ է պ. Ադամի կարծիքը, թէ «այս եպիսկոպոսն էլ նման Աչ-